

ԿԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Քանասիրական գիտությունների թեկնածու,

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

karine.arakelyan.2016@mail.ru

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԿԱՆԽԱՍԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾԱՐԵՆՑԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՎ

Քանայի բառեր՝ ցեղասպանություն, տագնապ, կանխասացություն, հայրենիք, քնարերգություն, ճակատագիր, ժողովուրդ:

Հայոց մեծ ողբերգությունից անցել է ավելի քան հարյուր տարի:

Սակայն արդյո՞ք ճիշտ է ցեղասպանության մասին խոսելիս հիշատակել միայն 1915-ը: Ինչպես իրավացիորեն նշում էր սփյուռքահայ տաղանդավոր բանաստեղծ Մուշեղ Իշխանը 1975-ին՝ «Մեծ Եղեռնը նախապատմութիւն մը ունի, որ կ'երկարի առնուազն քառասուն տարի ետ»¹:

Նախորդող քառասուն տարիների մեծ մասը համիդյան տիրապետության ժամանակաշրջանն էր: 1876 թվականից Օսմանյան Թուրքիայում իշխանության գլուխ անցած սուլթան Աբդուլ Համիդ II-ը վարում էր բացարձակ բռնության քաղաքականություն: Գրաքննությունը Կ. Պոլսում հասել էր բացարձակ անհեթեթության: Անվանի գրաքննադատ Արշակ Չոպանյանը գրում էր. «Պոլիսը... մարդկային ապուշությունն ու վայրագությունը ընկերական տեսակետով անեծքի ու փտության ոստանը դարձուցին»²:

Իսկ սփյուռքահայ ավագագույն գրողներից մեկը՝ Լևոն Մեսրոպը, վկայում էր, որ «Քրեական յանցանք էր գործածել օրինակ «Հայաստան» բառը: «Ազգ»ին տեղ հագիւ թոյլատրելի էին «տոհմ», «ցեղ» և «համայնք»: «Աղբերց արին» բոյսի մը գաւառական անունը պատճառ դարձաւ գրողին և տպագրողին բանտարկութեան, թարգմանուելով՝ «եղբօր արին» կամ «հայկական ջա՛րդ»... Ասպարէզը մնաց Մ. Պարսամեանի, Հ. Նազարեանի նման «բանաստեղծներու», որոնք եւրոպական խոհանոցին կեղծ-ռոմանթիք, հիւանդագին նորութիւնները կը կապկէին, ոչ մէկ կապ ունենալով հայ ժողովուրդին կեանքին ու հոգեբանութեան հետ, եւ անտաղանդ ու ապիկար գրչակներու,

¹ Մուշեղ Իշխան, Մեր ճշմարտութիւնը, Բագին, Պէյրուք, 1975, թիւ 4, էջ 1:

² Արշակ Չոպանյան, Երկեր, Ե., 1988, էջ 672:

Մեծ եղեռնի կանխասացությունը Մեծարենցի լեզվով

որոնք «հրապարակագրություն» կ'ընէին սիւնակներ լեցնելով ջոջ մարդոց յուղարկատրութեան, հարսնիքին, կնունքին կամ թաղական աղաներու կոիւններուն նկարագրութիւններով»³:

Այսպիսին էին հանգամանքները, ժամանակն ու միջավայրը, որոնք ծնունդ տվեցին Միսաք Մեծարենցին, որ միանգամայն նոր խոսք պիտի ասեր արևմտահայ գրականության պատմության մեջ և իր անջնջելի կնիքը թողներ հայ քնարերգության անդամատանում:

Բանաստեղծը ծնվել է 1886 թ. Ակնա գավառի Բինկյան գյուղում: Ծննդավայրի կուսական գեղեցկությունները խորը հետք են թողել մանուկ Միսաքի հոգում, բայց սխալ կլիներ կարծել, թե միայն կուսական բնության գեղեցկությունները:

Բինկյանը Արևմտահայաստանի հերոսական գյուղերից մեկն էր, որն ամբողջությամբ հայաբնակ էր և պահպանում էր անկախ վիճակ: «Երբ տերունական հարկերը հավաքելու համար կառավարական պաշտոնյան («ժանտարմ») գյուղ էր գալիս, նրան տեղավորում էին հատուկ կառուցված «գյուղական տանը», և նա «իրավունք պիտի չունենար իր հասակը ցցելու գյուղին փողոցներուն մեջ, վասնզի գեղանի հարս ու աղջիկներ աղբյուրներեն գլխաբաց, երեսաբաց ջուր կը տանեին իրենց տունները»: Գյուղն այնքան ինքնիշխան էր, որ շրջանառության մեջ էր մտցրել ոչ պաշտոնական, տեղական նշանակությամբ իր «յուրահատուկ դրամը»՝ դեղին թիթեղե, վրան հայերեն գրերով, «ոչ միայն Բինկյանի մեջ առևտուրի ատեն գործածական, այլև 6-8 ժամվա հեռավոր գյուղերը կը ճանչնային այդ դրամը և անոր վավերական արժեքը»⁴:

Գարեգին Եպիսկոպոս Սրվանձտյանցը, որը 1878-ին այցելել է Բինկյան, գրել է. «Օվաճըզի կամ որ նույնն է Դերսիմի քրդերը այս կողմի հայ ու թուրք գեղացիներեն տուրքեր կառնուն, կը կողոպտեն, կսպաննեն ևն. միայն բենկացիք իրենց քաջությամբ ոչ միայն ազատ կապրին, այլև կը սարսափեցնեն քրդերը. դեռ օվաճըզի ոտք կոխած չէ Բենկա: Թեպետ երբեմն երբեմն որսի, ճանապարհի և դաշտի մեջ կը պատահին իրարու, բայց հավասար քաջությամբ կը կշռեն մեկզմեկ, և եթե դեպ լինի, որ դարանակալությամբ բենկացի հայ մը կողոպտեն, կամ վիրավորեն, կամ սպաննեն քրդերը, քանի մը պատիկ պիտի տուժեն: Մեկ խոսքով՝ բենկացի հայեր հարուստ, քաղաքակիրթ և

³ **Լեւոն Մեսրոպ**, Միսաք Մեծարենցի վերածնունդը, Ծիրանի գոտի հանդես, Պոսդոն, 1959, թիւ 4, էջ 40-41:

⁴ **Շարության Ալ.**, Միսաք Մեծարենց, Ե., 1983, էջ 24:

Առաքելյան Կ.

քաջարի են. և եթե իրարու հետ միություն պահեն, իրար սիրեն ու հարգեն, անհամեմատ են բոլոր Հայաստանի հայոց մեջ, որոնց օրինակ ալ կրնան լինիլ»⁵:

Բինկյանցիները 1896-ին համիդյան կոտորածների ժամանակ քաջաբար դիմադրեցին թուրք ջարդարարներին, իսկ 1915-ին կրկին դիմեցին ինքնապաշտպանության: Նրանց մի մասը զոհվեց, մի մասը գաղթեց օտար երկրներ: Հետագայում շուրջ հարյուր տարագիրներ վերադարձան և բնակություն հաստատեցին հայրենի գյուղում:

Մ. Մեծարենցը Բինկյանում ապրեց ընդամենը ինը տարի, իսկ Բինկյանը Մեծարենցի քերթվածներում՝ հավերժ: Հարազատ գյուղի աննկուն ու հայրենանվեր ոգին չէր կարող իր խորը ազդեցությունը չթողնել հանճարեղ պատանու վրա, և սրա առաջին ապացույցները գտնում ենք Մ. Մեծարենցի՝ դեռևս Մարզվանի Անատոլիա քոլեջում ուսանելու տարիներին (1899–1901թթ.): Բանաստեղծի հորեղբորորդին՝ Զարմայր Մեծատուրյանը նշում է, որ «Գոլեմի մեջ ինքնաբերաբար կազմված էր ընկերության սեղմ շրջանակ մը՝ հետևյալ ուսանողներե. Մանուկ Գ. Խշտյան (կեսարացի), Գագիկ Օզանյան (Շ.Գարահիսար), Մկրտիչ Գոքանյան (Տիվրիկ), Թադեոս Մեծատուրյան, Միսաք Մեծատուրյան (Բինկյան), Հովհ. Գ. Թումայան և Գրիգոր Ազըլյան (Մարզվան), տակավին ուրիշ մը քանիներ: Այս խմբակը գաղտնորեն արտասահմանեն Չոպանյանի «Անահիտը» կստանար կանոնաբար ու կկարդար: Ուրեմն, Մարզվանեն կ'սկսի հետևիլ արտասահմանյան գաղտնի հրատարակությանը»⁶:

Շարունակությունը հետևում է Ղալաթիայի Կեդրոնական վարժարանում, որտեղ 1902–1905 թթ. սովորել է Մ. Մեծարենցը: Այստեղ էլ մի ուշագրավ փաստ է վկայակոչում նույն վարժարանի սան Հակոբ Սիրունին, համաձայն որի, «արտասահմանեն Պոլիս սպրդած գիրքերը եւ թերթերը կանցնէին ձեռքէ ձեռք... Բացի պաշտօնական մատենադարանէն, գաղտնի գրադարան մը եւս կը պտտցնէինք մեր գրպաններուն մէջ»⁷:

Կեդրոնականում Մ. Մեծարենցը ձեռնարկում է «Քահ-քահ» կոչվող երգի-ծաթերթի հրատարակության գործին: Լինելով խմբագիր՝ Միսաքն ինքը կազմում էր համարը, որտեղ առկա էին արձակ և չափածո գործեր, իսկ երգիծա-

⁵ **Սրուանձտեանց Գ.Վ.**, Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ, մասն առաջին, Կ. Պոլիս, 1879, էջ 239–240:

⁶ Զարմայր Մեծատուրյան, Հիշողություններ Միսաք Մեծարենցի մանկական կյանքեն, Սովետական գրականություն, Ե., 1978, մարտ, N 3, էջ 137:

⁷ **Սիրունի Յ.**, Այս հիանդ, հանճարեղ պատանին, Նայիրի, Պեյրուֆ, 1969, թիվ 19:

Մեծ եղեռնի կանխասացությունը Մեծարենցի լեզվով

նկարների հեղինակը Ռաֆայել Շիշմանյանն էր: Դասընկերների վկայությամբ՝ ամեն բանից հասկանում էր և ամեն բանից հաճույք ստանում, որով գրգռում էր բարձր դասարանցիների նախանձը, քանի որ ակներև էր Մ. Մեծարենցի բացառիկ կարողությունը: «Քահ-քահի» հինգ թիվ լույս է տեսնում, ապա հրատարակությունն ընդհատվում է բանաստեղծի հիվանդության պատճառով:

Մ. Մեծարենցի հայրենասիրական ու հեղափոխական զգացումներն այսքանով չեն ավարտվում: Դրանց արմատները շատ խորն էին և հեղինակից անբաժան եղան մինչև կյանքի եղերական վախճանը: Նույն Հ. Սիրունին մեկ այլ առիթով գրել է, որ «Հայրենասէրը շատ քիչ ճանչցուած է Մեծարենցի մէջ: Բայց Մեծարենց հայրենասէր մըն էր, ու անիկն՝ հաւատացող մը: Ան կը պատկանէր երիտասարդ խմբակի մը, որ հակառակ շատ մը յուսախաբութեանց եւ տիրող ահաւոր սարսափին՝ դեռ վառ կը պահէր իր մէջ յեղափոխութեան շունչը, հաւատքը գալոց երջանիկ օրերուն: Արտասահմանէն ստացուած թերթեր ու գիրքեր ամուր կը պահէին յոյսը եւ պայքարի տենչը այդ բոլոր մը երիտասարդներուն մէջ: Մեծարենց ջերմեռանդ ընթերցող մըն էր այդ յեղափոխական գրականութեան: Վահրամ Թաթուլի միջոցաւ կը հայթայթուէին իրեն այդ գիրքերն ու թերթերը, որոնց բերած յոյսն ու սարսուռը ծծելէ յետոյ՝ երկուքը միասին զանոնք կը յանձնէին մոմի մը բոցին...»⁸:

Սակայն անմտություն կլիներ կարծել, թե Միսաք Մեծարենցի պես անհատը և բանաստեղծը զբաղված էր միայն արգելված գրականություն ընթերցելով: Կ. Պոլսի տաղտուկ ու գարշահոտ միջավայրում նա ստեղծում էր իր աշխարհը՝ լուսավոր, չքնաղ ու հուզառատ, աշխարհ անանձնական երջանկության, հույսի, սիրո ու սպասումի: «Սիամանթոն, Սևակը և Վարուժանը ապրում էին արտասահմանում և ազատ էին հետևելու իրենց քաղաքական ու սոցիալական և բարոյական նախասիրություններին: Իսկ գավառից եկած այս պատանի բանաստեղծն ապրում էր բուն դժոխքում՝ Կ. Պոլսի մղձավանջում: Հետևաբար, նրա բնության ու սիրո նվագները առերևույթ թվում են «ապաքաղաքական», անվնաս, որոշ իմաստով ներելի նաև թուրք գրաքննչության պայմանների մեջ... Մեծարենցի երգերում նույնպես ապրում և շնչում է հայրե-

⁸ **Սիրունի Յ.**, Գիծեր Միսաք Մեծարենցի կեանքին, Հայրենիք, Բոստոն, 1923, թիվ 10, էջ 66:

Առաքելյան Կ.

նիքը: Նրա ստեղծագործությունը թուրքական կապանքներում գտնվող երիտասարդության հոգու գեղարվեստական պատմությունն է»⁹:

Միսաք Մեծարենցի՝ բնութենապաշտ հեղինակ լինելու մասին շատ է խոսվել ու գրվել, և փաստ է, որ նրա ստեղծագործությունների մի ստվար մասը նվիրված է բնության նկարագրությանը: Սակայն բնության թեմային անդրադառնալիս չի կարելի չհիշել գյուղին նվիրված նրա ստեղծագործությունները՝ գյուղերգությունը, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, հենց հայրենի Բինկյանի չնաշխարհիկ բնությունն է եղել բանաստեղծի ներշնչանքի հիմնական աղբյուրը:

Մ. Մեծարենցը մտովի անվերջ սավառնում էր դեպի հայրենի եզերք, որտեղից հեռացած լինելով իննամյա հասակում, այդպես էլ երբևէ չկարողացավ վերադառնալ: Գյուղական պատկերները, գեղջկական կյանքի աննշան թվացող մանրամասներն իրենց քնարական մեկնաբանություններն ստացան Մ. Մեծարենցի չափածոյում, ինչպես.

Հակուրջի մը առկախած գյուղակն անդին կ'օրորեն
Անրջական հյուսվածքով խումբ մը ժայռի ըստվերներ.
Վանքին բակը՝ կ'աղոթեն հսկա ծառեր տարորեն՝
Որոնց տամուկ շուքին մեջ Աստվածամարն է կայներ...¹⁰

Քրոջ ամուսնուն՝ Վարդան քահ. Արսլանյանին ուղղած նամակում Մ. Մեծարենցը խոստովանում էր. «Գյուղին տեսարանները իմ մեծագույն ներշնչարանս կը կազմեն, որքա՞ն կը ցավիմ, որ էպես իրենց զավակը չեմ իմ բանաստեղծության մեջ. այն ատեն ավելի ինքնատիպ ու ապրող կ'ըլլայի: Անշիջանելի բաղձանքս եղած է վերստին տեսնել ու ապրիլ գյուղիս ծոցը՝ նորոգվիլ իր տեսարաններուն ու գեղեցկություններուն ավիշով...» (289):

Մ. Մեծարենցի սրտակից բարեկամ բանաստեղծ Վահրամ Թաթուլը նույնիսկ այն կարծիքն է հայտնել, թե. «Մեծարենց ոչ թե հիւժախտէն, այլ հայրենաբաղձութենէն մեռաւ»¹¹:

Մ. Մեծարենցի քնարերգությունը հաճախ է համարվել ապաքաղաքական, սակայն քննությունը ցույց է տալիս, որ նրան միշտ էլ չափազանց մտա-

⁹ Թամրազյան Հ., Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Ե., 1986, էջ 204–205:

¹⁰ Մեծարենց Մ., Երկերի լիակատար ժողովածու, Ե., 1981, էջ 94: Այսուհետև այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում՝ փակագծերի մեջ:

¹¹ Սիրունի Հ., նշվ. աշխ., էջ 67:

Մեծ եղեռնի կանխասացությունը Մեծարենցի լեզվով

հոգել է հայրենիքի և ժողովրդի ճակատագրի խնդիրը: Այդ են վկայում «Երգը» բանաստեղծությունը, ինչպես նաև այն ոտանավորներից պահպանված պատառիկները, որոնք հասկանալի պատճառներով չեն հրատարակվել և ցայժմ մնում են ընթերցողին անծանոթ: Այս ստեղծագործությունները բերում են գեղագիտական նոր, մինչև այդ Մ. Մեծարենցի գրչին ոչ բնորոշ որակներ: Կտրուկ փոխվում է ոչ միայն թեմատիկան, այլև բառային կազմը: Հեղինակի ողջ չափածոյում չեն գործածվել այստեղ առկա *ամբոխ, աստվածաբոցն, արյուն, դարակ, խեղդամահ, հայրենիք, հաց, հրապարակ, հրացան, հնծանյան, վրեժ* բառերը:

Հեղինակի կենսագիր Թորոս Ազատյանը նշում է, որ Մ. Մեծարենցը կարդացել էր Եվրոպայում հրատարակված թերթերը, ինչպես նաև Սիամանթոյի «Հոգեվարքի և հույսի ջահերը», ապա ավելացնում. «Այդ հրատարակություններով իր մեջ էն կ'ընդանցնին նոր տառապանքներ ու զգայնություններ ու պահ մը իրեն երգել կու տան «հայ արիւնին ու հայ վիշտին» վսեմ տրտմութեամբը սարսուգին քանի մը բանաստեղծութիւններ... Վ. Թաթուկը յիշէ անոնցմէ մէկուն երկու անշատ տողերը»¹², որոնք են.

Հրապարակներուն վրայ ամբոխը հաճ, հաճ կ'աղաղակե... (191)

Լուսինը խեղդամահ աչքն էր հայրենիքիս... (191)

Հեղինակի ստեղծագործության մեջ լիովին առանձնանում է «Երգը» բանաստեղծությունը: Մ. Մեծարենցի կենդանության օրոք այն չի հրատարակվել, առաջին անգամ տպագրվել է Կ. Պոլսի «Ազդակ» շաբաթաթերթում, 1909 թ. հունվարին: XIX դարի վերջին և XX դարասկզբին արևմտահայ իրականության մեջ հայկական «սովորական» դարձած իրար հաջորդող մեծ ու փոքր կոտորածները հաճախ իրենց արտացոլումն էին գտնում գրականության մեջ, ինչը միանգամայն բնական է: Սակայն Մ. Մեծարենցի քնարական հերոսը, որը նախճիրի ականատեսն է, վարագույրի հետևում է պահում սպանդի ահագարհուր տեսարանները, այն դեպքում, երբ ժամանակի մյուս բանաստեղծներից շատերը՝ Դ. Վարուժանը, Ռ. Սևակը և հատկապես Սիամանթոն նկարագրում էին այդ մղձավանջը իրենց տաղանդի ողջ թափով և ուժով: Սակայն արդյո՞ք սրանից կարելի է ենթադրել, որ Մ. Մեծարենցի «Երգը» որևէ կերպ զիջում է նշված հեղինակների ստեղծագործություններին: Բանաստեղծը տեսնում ու զգում է արյունը, զգում է ամբողջ էությանը, բոլոր զգայարաններով: Հինգ տնից բաղկացած ոտանավորում *արյուն* բառն օգտագործված է հինգ

¹² Ազատեան Թ., Միսաք Մեծարենց (իր կեանքը), Կ. Պոլիս, 1922, էջ 50–51:

Առաքելյան Կ.

անգամ, մինչդեռ, ինչպես արդեն նշել ենք, մնացած ողջ չափաճոյում չի հանդիպում գեթ մեկ անգամ: Արյունը դառնում է խորհրդանիշ, անմեղ նահատակների խորհրդանիշը, դառնում է կենդանի, խոսում քնարական հերոսի, իսկ նրա միջոցով՝ ընթերցողի հետ, խոսում է մինչև այժմ և խոսուն կլինի միշտ.

Ձի ամեն բան ինձ կրկին

Կը դարձնեն ձայնն *արյան...* (190)

Բանաստեղծն զգում է արյան համը, հոտը, գույնը, ձայնը ամեն իրի ու երևույթի մեջ: Ատոմ Յարճանյանի սարսուղադու, սակայն ինչ-որ տեղ միագիծ պատկերին՝ «Եվ բանաստեղծի աչվըներս արյո՛ւն, արյո՛ւն, արյո՛ւն է որ կը-տեսնեն...»¹³, հակադրվում է մեծարենցյան խորհրդանշական բազմաշերտ պատկերը: Եթե Սիամանթոն ամբողջությամբ տեսնում է, ապա Մ. Մեծարենցն ամբողջությամբ ապրում է, ինչը նրան ի վերջո հանգեցնում է միակ ճշմարտացի լուծմանը՝ արդար վրեժի գաղափարին.

Քո՛ւյր, մոտեցո՛ւր իմ ձեռքին

Աստվածաբոցն հըրացան,

Ձի ամեն բան ինձ կրկին

Կը հիշեցնէ վրե՛ժն արյան... (190)

Հայրենասիրական շնչով գրված այս բանաստեղծությունը կազմված է չափազանցություններից, սակայն քնարերգուի մեծ վարպետության շնորհիվ մի պահ նույնիսկ թվում է, թե չկա չափազանցություն, և բնությունն ու արտաքին աշխարհն առհասարակ այս դեպքում իրոք կենտրոնացել են մեկ բառի՝ *արյան* մեջ:

Մ. Մեծարենցի հուշագիրներից այս բանաստեղծության մասին հիշել է Օֆելյա Ներկարարյանը, ինչպես նաև հավելել, որ «Համիտի ռեժիմը բռնացավ Շավասպին (Մեծարենցի կեղծանունն է – Կ.Ա.) հայրենի սերը, կարոտը տպագրելու, և սակայն ան ուներ խիստ զգայուն, բուռն և ըղձոտ հայրենաշունչ հոգվածներ, որոնք մեզի կը կարդար»¹⁴:

Միսաք Մեծարենցն իր ժողովրդի հարազատ զավակն էր և այդպիսին մնաց իր ողջ երկրային կյանքի՝ քսաներկու տարիների ընթացքում: Ամփոփելով պիտի նշենք, որ նա ապրեց իր հայրենիքի ցավով, սարսուռաց գալիք ար-

¹³ Ցեղին սիրտը, արևմտահայ բանաստեղծություն, Ե., 1991, էջ 256:

¹⁴ Օֆելյա Ներկարար Գասպարյան, Միսաք Մեծարենց, Միսաք Մեծարենցը և Դանիել Վարուժանը ժամանակակիցների հուշերում գրքում, Ե., 1986, էջ 108:

Մեծ եղեռնի կանխասացությունը Մեծարենցի լեզվով

հավիրքների տագնապից, ստեղծագործեց իր ժողովրդի համար: Բնության, սիրո ու սպասման կողքին երգեց արյունն ու վիշտը հարազատ ժողովրդի, մորմոքը կորստի և պարտադրանքը արդար վրեժի: Ցավոք նրա հայրենաշունչ գործերի մեծ մասը մնաց ընթերցողին անծանոթ, իսկ պահպանված «Երգը» և երկու պատառիկները բավական եղան ապացուցելու պատանի բանաստեղծի անհուն սերը և անմնացորդ նվիրումը հայրենիքին, կրած տառապանքները և ելքի որոնումները դժոխային իրականությունից:

Ճշմարիտ է, որ «Միսաք Մեծարենց միևնույն ատեն մէկ մասն է հայ ժողովրդին պատմութեան: Թրքական կամ ցարական լուծի տակ նոյնն էր ճակատագիրը հայ գրողին, արուեստագէտին և հայրենասէրին: Նուիրուիլ իրենց սիրած կոչումին զրկանքի, հալածանքի և յաճախ կեանքի գնով»¹⁵:

Ամենավերջում նշենք, որ 1915-ը չանցավ Մեծատուրյանների ընտանիքի կողքով... Բանաստեղծի ավագ եղբայր Գևորգը՝ փաստաբան, նահատակվել է Կարինում՝ տարագրության օրերին, քրոջ ամուսինը՝ Տեր Վարդան քահ. Արսլանյանը, նահատակվել է քսորի ժամանակ խուժդուժ պայմաններում, քույրը՝ Թագուհին, անհետ կորել է տարագրության մեջ:

Յիշատակ արդարոց օրհնութեամբ եղիցի:

FORETELLING THE GENOCIDE THROUGH METSARENTS' POETRY

ARAKELYAN K.

Summary

Keywords: *genocide, alarm, foretelling, native land, poetry, fortune, nation.*

In the works of the great Western - Armenian poet Misak Metsarents the themes of nature, love, spirituality and the bliss of existence are prevalent, while political and patriotic themes are absent. However, the poet was profoundly preoccupied with the fate that awaited his motherland and his nation, and a number of patriotic poems that have not been published yet and are unknown to

¹⁵ **Լեւոն Մեսրոպ**, Միսաք Մեծարենցի վերածնունդը, Ծիրանի գոտի, Պոստոն, 1959, թիվ 4, էջ 43:

the reader testify to this. The poem “Song” and two fragments from his unpublished poetry convey the young poet’s boundless love and devotion to his motherland, his torments and desperate attempts to find a way out of the infernal reality.

ПРЕДСКАЗАНИЕ ГЕНОЦИДА ЯЗЫКОМ ЛИРИКИ МЕЦАРЕНЦА

АРАКЕЛЯН К.

Резюме

Ключевые слова: *геноцид, тревога, предсказание, Родина, поэзия, судьба, народ.*

В творчестве великого западноармянского поэта Мисака Мецаренца доминирует тема природы, любви, духовности, тема счастья бытия, но отсутствует политическая или патриотическая лирика. Однако поэт всегда был глубоко озабочен судьбой Родины и народа, и свидетельством тому является ряд патриотических стихотворений, которые не были изданы и по сей день не знакомы читателю. Дошедшие до нас стихотворения «Песня» и два стихотворных отрывка из неизданной лирики говорят о безграничной любви и преданности юного поэта к Родине, его душевных терзаниях и попытке найти выход из адской действительности.